

ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

Ա. ՍԱՐՈՒԻԽԵԼՆ, «Ֆիրդուսի եւ Մովսէս Խորենացի»
Saroukhan, - Firdowci et l'influence iranienne dans la littérature
georgienne.

Սարուխանի այս գիրքը, գրւած երկու լեզուվ, առաջին վայրկեանին մի ժիշտարօրիթնակ տպաւորութիւն է բռնում: Նրա երկու մասի մէջ էլ կայ բաւականաչափ նիւթ, որ բեմայի հետու ուղղակի առնչութիւն չունի: Այսպէս, օրինակ, հայերէն մասում մեմն գտնում էնք մի շարք դատողութիւններ երեւանում երատարակւած Ֆիրդուսու ժողովածուի մասին, դիտողութիւններ Փարիզի Ազգային մասնենադարանում կագմակերպած ցուցահանդէսի վերաբերեալ, յիշողութիւններ հեղինակի 1922 թ. Անթիմգրադում եւ Մոսկվայում ապրած օրերից, եւ այս կարգի ուրիշ այլ նիւթեր, որոնք ինքն ըստ ինքնեան շատ հետաքրքական են, բայց գրքի բուն բեմային չեն վերաբերում: Ֆրանսերէն մասում կան յաւելումներ, որոնց մէջ հեղինակը խօսում է վրացական գրերի գիւտի եւ կրօնական գրականութեան մասին:

Մի կողմ դնելով այդ յաւելեալ նիւթը, դիմենք գրքի հիմնական բովանդակութեան: Ա. Սարուխանը սահմանափակել է իր հետազոտութիւնը միայն Մովսէս Խորենացիով: Հայ միւս մատենագիրներն ու հայ ժողովրդական վեպը նա ի նկատի չէ ունեցել եւ շանացել է միայն պարզել այն հարցը, թէ ինչ ազդեցութիւն է ունեցել իրանական վեպը Խորենացու պատմութեան վրա: Պէտք է մատմաթչել, որ այդ հարցը բազմաքի

անգամներ բննութեան է ենթարկւել հայագէտների կողմից եւ այդ պատմառով էլ Ա. Սարուխանը չի կարողացել շատ նոր բան ասել այդ ուղղութեամբ: Նա, ի միշի այլոց, բննութեան է ենթարկում այն հարցը, թէ երբ է գրւած Խորենացու պատմութիւնը եւ գալիս է այն եղրակացութեան, որ այդ 7-րդ դարուց աւելի շատ չէր կարող լինել: Դրժախտարար հեղինակը մոռացել է ասելու, որ նոյն խնդրով գրակել են մի շարք ուրիշ գիտնականներ, ինչպէս օրինակ, Խալարեանցը, Մառը, Ստ. Մալխանան եւ վերջապէս Ն. Ադրնցը, որը 35 տարի առաջ վերջնականապէս ապացուցել է, որ Խորենացու պատմութիւնը գրւած է 7-րդ դարուց ոչ շատ եւ հաւանօրէն դրամից էլ ուշ:

Ֆրանսերէն մասում Ա. Սարուխանը, ինչպէս ասացինք, երկու յաւելածներ է զետեղել, որոնց մէջ խօսում է վրացական այրբենի գիւտի եւ կրօնական գրականութեան մասին: Թէեւ այդ նիւթը գրքի բուն բեմայի հետ անմիջական կապ չունի, բայց եւ այնպէս երկու դիտողութիւններ անհրաժեշտ ենք համարում անել: Յայտնելով որ վրացական գրերի գիւտը կատարել է Մեսրոպը Կորիւնի հետ միասին, Ա. Սարուխանը, հետեւելով P. Peeters -ին, պըմառում է, որ Կորիւնը վրացի է եղել եւ աւելացնում է, որ մանրական ապացոյցներ այդ մասին նա բերել է իր

«Վերաստան եւ Հայկը» աշխատութեան մէջ, որ լոյս է տեսնելու մօտ ժամանակներս: Քանի դեռ այդ ապացոյցները չեն ներկայացւած ու չեն ստուգւած, Ա. Սարուխանի պնդումը Կարիսնի մասին մնում է տարակուսելի:

Երկրորդ դիտողաւրիսնը վերաբերում է Բուլգարիայի բաղեղունական վանի հիմնադիր եւ բաղեղունական դաւանանին պատկանող հայազգի Գրիգոր Բակուրեանին: Վանի կանոնադրութեան մէջ, որ կազմել է եւ հայերէն ստորագրել Բակուրեանը, ասւած է, որ վանենում յայներ ընդունիլ չեն կարող, իսկ միւսներից արտօնում է միայն նրանց մուտքը, ովքեր զիտեն վերացերէն: Այս տեղից հեղինակը եզրակացնում է, որ Բակուրեանը վրաց ժողովրդի ջերմ կողմնակիցներից է եղել: Ա. Սարուխանը ներկայ դէպքում տրամարանական սխալ է գործում: Խնդիրն այն է, որ Բակուրեանը վանի ընդունուղների առաջ պայման չէ դրել որ նըրանի վրաց ազգին պատկանին, այլ պահանջել է միայն որ վրացերէն գիտնան եւ այդ արել է այն պատմառով, որ արտօնելով հանդերձ հայերին վանի միարան դառնալու - եւ հայերի թիւը այդ վանենում իիչ չէր - նա կամեցել է արգիւիլ, որ վանի մտնի հայերէն հակառակեդունական գրականութեան, որ կարող էր գայթակեցնել միարաններին:

Այսքան շատ շեղումներից յետոյ, դառնալով վերջապէս իր նիւրին, Ա. Սարուխանը այլեւս առանձին ցանկութիւն չէ ցուցարերում լրջօրէն գրադելու իրեն առաջադրած հիմնական հարցով - իրանական ազդեցութիւնը վրացական գրականութեան վրա - եւ սահմանափակում է միայն «Ընձենաւորի» հեղինակ Ռուստավելու մի քանի նախորդների անուններով: Ա. Սարուխանը տալիս է պոէմի ընդհանուր բավանդակութիւնը եւ Ռուստավելու վրա ունեցած ֆիրդովսու ազդեցութեան իրք ապացոյց բերում է այն փասոր, որ

Ռուստավելու պոէմի հերօսը՝ Թարիէլը կրում է իր ուսերին ընձենի, իսկ Շահնամէի հերօս Ռուստավելը՝ վագրի մորք եւ որ Ռուստավելու պոէմի բոլոր գործող անձինք մահմեդականներ են: Հականալի է որ իրք ապացոյցները չեն կարող ընդունիլ պ. Սարուխանի ոչ առաջին եւ ոչ ել երկրորդ դիտողաւրինը, որովհետեւ թէ՛ Շահնամէն եւ թէ Ընձենաւորը չունին մասնայատուկ մահմեդական դրոշմ: Այդ կարելի է ասել մանաւանդ Ընձենաւորի համար, որի մէջ Մուհամեդի անունը ընդամենը մէկ անգամ է յիշատակուում:

Ռուստավելու պոէմը համեդիսանում է ամենալավ ապացոյցը իրանական ազդեցութեան՝ վրաց գրականութեան վրա: Այդ պոէմի մէջ ամէն ինչ պարսկական է՝ զործող անձինք, նրանց հոգիքանութիւնը, միջավայրը, վերջապէս դէպքերի նկարագրութիւնը: Ինչք՝ Ռուստավելին յայտնում է, որ միայն ուսանաւորի է վերածել պարսկական պոէմը, որ արդին գոյուրեին ունետ վրացերէն արձակ բարգմանութեամբ:

Վրաց գրականութեան վրա բողած իրանական ազդեցութեան ուրիշ հետութիւր, ըստ երեւոյրին, այլեւս չի գտնում Ա. Սարուխանը, որովհետեւ, Ռուստավելու պոէմի համառոտ տեսութիւնն անելուց յետոյ, նա, օգտևելով պրաֆ. Մելիքսէրէզի յօդածով («Գեղարևուս» 1921 թ. թիւ 7), տալիս է անունները մի քանի հայերի, որոնց գրաւած տեղը վրաց գրականութեան մէջ այնեան էլ անկարեւոր չէ: Մինչդեռ իրանական ազդեցութիւնը վրաց գրականութեան վրա, որ սկսել էր Ամիրամ-Դերեշանի մասին եղած արձակ վէպով, շարունակում է մինչեւ 18-րդ դարը, որից յետոյ միայն լոյս են տեսնում գրական մի քանի երկեր ազգային բովանդակութեամբ:

Անըին են վրաց գրականութեան մէջ բարգմանութիւնները եւ փոխառութիւնները պարսկի բանաստեծներից: Այդ բուռմ մէմի գտնում ենք թէ առաջնա-

կարգ քերքողներ ինչպէս Ֆիրդուլսին ու Նիզամին եւ թէ մի բաւականին երկար շարք երկրորդական բանաստեղծներից: Սրանց գործերը օրինակ են ծառայել վրացական պոէմների ու վէպերի համար եւ այդ բալոր երկերը խուսափել են պ. Սարուխանի ուշադրութիւ-

նից:

Հակառակ յաճախ կրկնուող շեղումներին ու շարադրութեան անմիջաձաւլութեան այ. Սարուխանի գիրքը տալիս է հայ-ֆրանսական լճքերցողին բազմարիւ նոր եւ հետաքրքրական տեղեկութիւններ:

8. Զ.

ԱՐՄԱՆ ԿՈԹԻԿԵԱՆ, «Ֆիրդուսի թուսի եւ իր Շահնամէն»

1936 Փարիզ.

1934 թվին Իրանը տօմեց իր ամենամեծ բանաստեղծի՝ Ֆիրդուսու ծննդեան հազարամետակը: Ամբողջ բաղաքակիրք աշխարհը արագնգ տուաւ այդ յորելեանին, իրատարակելով բանաստեղծի ստեղծագործութեան նիկրւած մի շարք ուսումնասիրութիւններ՝ ու մենագրութիւններ: Մենք հայերս, որ դարեր շարունակ ապրել ենք պարսիկների հետ ընդհանուր կեսամեռ եւ այսօր էլ բարի դրացիշական յարաքերութիւններ ունենք իրամեան ազգի հետ, չենք կարող անտարեր մնալ վերոյիշեալ խոշոր իրադարձութեան հանդէպ: Եւ յիրափ, նաև հայ գրականութեան մէջ լոյս են տեսնում Ֆիրդուսուն նիկրւած մի բանի աշխատութիւններ, որոնց կարգն է պատկանում նաև պ. Ա. Կորիկեանի գիրքը: Հեղինակն իր յառաջարանի մէջ յայտնում է, որ «հեռու է մասնագիտական լրի գործ մը կատարած բլլալու յատկնութենէն» եւ որ իրեն «առաջնորդողը եղած է պարզապէս, նիւրին վերաքերեալ, օգտակարութեան դոյզն բաժին մը բերելու զաղափարը»:

Աշխատութեան առաջին գլխում, որ կրում է «Հին Պարսկաստանը եւ իր ժշակութը» վերնագիրը, հեղինակը տալիս է պարսկէ ժողովրդի եւ նրա մըշակութային գարգացման համառօս պատմութիւնը: Ուր էջի մէջ այսպիսի մի լնդարձակ նիւր սեղմելու փոքը

չէր կարող յաջողութեամբ պատկւել, եւ Ա. Կորիկեանի պատմական ակնարկը չափէց աւելի ընդհանուր քնյոյք է կրում եւ որոշ տեղերում նոյնիսկ անհամոզցուցիչ է:

Երկրորդ գլուխը - Ֆիրդուսի եւ իր կեանքը - ամենայաջողն է այս գըրքում: Հեղինակը լայմօրէն օգտագործել է հոչակառը Մոհե-ի կողմից այսին գեղեցիկ կերպով գրւած Ֆիրդուսու կենսագրութիւնը, որի հետեւամեռվ եւ այս գլուխը կարդացւում է մեծ համեյքով:

Երրորդ գլուխը կոչում է «Շահնամէն եւ իր աղբիւրները»: Ա. Կորիկեանը այսուեղ, ի միջի այլոց, շօշափում է պարսկական տաղաչափութեան հարցը եւ տալիս է ուսամաւորների չափի մասին իր սեփական տեսութիւնը, որը, պիտի խոստովանեմ, ինձ համար այնքան էլ պարզ չէ: Այս գլխում նա տալիս է նաև «Շահնամէ»-ի հետեւալ գնահատանքը: «Շահնամէ»ի արժեքը, - գրում է Ա. Կորիկեանը, - պէտք չէ կապել անոր պատմագրական նըշտութեան հետ, այլ անոր բանաստեղծական հզօր շոնչին եւ ներքին փիկութիւնութեան հետ»:

Անիրաժեշտ ենք համարում մատնանշել հեղինակի մի շատ սրամիտ դիտողութիւնը: Ինչպէս յայտնի է, Ֆիրդուսու պոէմը լիբն է ասպետների եւ աւատական իշխանների կենսից առ-